



«07» 08 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 67

**Ձեռնարկողը՝**

**<<Քենի Վենչուրս>> ՍՊԸ**

*Ք. Երևան, Մելիք-Աղամյան 2/2*

**Գործունեությունը՝**

**Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

*<< Linnu մարզ*

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն  
տնօրեն՝**



**Վ. Սահակյան**

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 67

«07» 08 2017թ.

«Քենփ Վենչուրա» ՍՊԸ կողմից ներկայացված Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«Քենփ Վենչուրա» ՍՊԸ
Նախագծող՝	«Քենփ Վենչուրա» ՍՊԸ, Թիմ Ֆլին Արքիթեքս
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա



Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակներում Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ:

Դպրոցը նախատեսվում է կառուցել Ստեփանավան քաղաքի հարավ-արևելյան հատվածի Աշոտաբերդ թաղամասում գործող թիվ 3 հիմնական դպրոցի բացօթյա մարզահրապարակի տարածքում: Դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3580 ք.մ, իսկ կառուցվող դպրոցի ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ (ներառյալ նաև գործող դպրոցի տարածքը) կազմում է 2.1 հա: Գործող դպրոցի շենքը նախատեսվում է պահպանել:

Դպրոցը բաղկացած է լինելու 8 մասնաշենքերից: Նախագծվող դպրոցի «Գ» և «Ե» մասնաշենքերը՝ համապատասխանաբար 40.6x14.7մ և 31.4x37.3մ առանցքային չափերով, ծառայելու են տարրական և միջին դպրոցների համար: Նշված մասնաշենքերը նախագծվում են որպես երկհարկանի կառույցներ: «Գ» մասնաշենքում նախատեսվում է կառուցել տարրական դասասենյակները և վարչական սենյակներն, իսկ «Ե» մասնաշենքում նախագծվում են միջին դպրոցի դասասենյակները, լաբորատորիաները, կաբինետները և դպրոցի գրադարանը: Նշված մասնաշենքերի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր, իսկ ծածկույթի համար կօգտագործվի պրոֆիլավորված գործարանային ներկված ցինկապատ թիթեղներ: Մասնաշենքերի տանիքը կունենա կազմակերպված արտաքին ջրահեռացում:

Handwritten signatures and initials in blue ink at the bottom of the page.

Միջին և տարրական դպրոցի մասնաշենքերում («B» և «G») հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ սակավաշարժուն խմբերի համար նախագծվում են վերելակներ, թեքահարթակներ՝ արտաքին մուտքերում, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար հարմարեցված սանհանգույց:

Դպրոցի մնացած 6 մասնաշենքերը՝ «A», «C», «D», «E», «F», նախագծվում են որպես միահարկ կառույցներ: «A» մասնաշենքը ծառայելու է որպես նախասրահ, որտեղ նախատեսվում է նաև կառուցել դպրոցի ճաշարանը և վարչական սենյակները: Դպրոցում նախագծվում է ունիվերսալ դահլիճ՝ «C» մասնաշենքում, և մարզադահլիճ՝ «F» մասնաշենքում: «D» և «E» մասնաշենքերում նախագծվում են դպրոցի հանդերձարանները և սանհանգույցները: Ներկայացվող մասնաշենքերի տանիքը նախագծվում է հարթ՝ կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ: Տանիքի ջրամեկուսացման համար նախատեսվում է օգտագործել պենոպոլիստիրոլի երկշերտ ջրամեկուսիչ թաղանթ:

Նախագծվող դպրոցում նախատեսվում է 10 մուտքեր, որոնց տեղադիրքի ընտրությունն իրականացված է այնպես, որ դպրոցի համալիրն ամեն տարածքից ունենա առնվազն 2 էվակուացիոն ելքեր, բացի այդ մուտքերի դասավորվածությունը կատարվել է այնպես, որ նախագծվող դպրոցի որոշ տարրեր (սպորտ դահլիճ, ճաշարան, գրադարան, բազմաֆունկցիոնալ դահլիճ) ունենան առանձին կազմակերպված մուտքեր՝ արտադասարանային ժամերին համայնքի կողմից օգտագործվելու նպատակով:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ նաև դպրոցի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: Մասնաշենքերի արտաքին ճակատային հարդարման լուծումներում կօգտագործվի սվաղ և քարե շարվածք:

Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների տեսանկյունից մասնաշենքերի համակցումը նախագծվում է այնպես, որ արտաքին պատերի պարագիծը (հատակագծում) լինի նվազագույնը: Բոլոր պատերն արտաքինից կջերմամեկուսացվեն 90մմ հաստությամբ հանքային բամբակով, հարթ տանիքները՝ 100մմ էքստրուդացված պենոպոլիստերոլով, իսկ ձեղնահարկերը՝ փքապերլիտե պարկերով և 100մմ հաստությամբ խարամի շերտով:

Նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցերը:

Դպրոցին կից նախատեսվում է կառուցել 5.0x5.0մ առանցքային չափերով, 21.16 ք.մ. մակերեսով և 5.84մ բարձրությամբ կաթսայատուն:

Կառուցվող դպրոցի ողջ պարագծով նախատեսվում է նոր ցանկապատի տեղադրում: Դպրոցի մուտքային մասի ցանկապատը նախագծվում է ներկված մետաղական տուփածն խողովակներից, իսկ ետնամասի ցանկապատը՝ մետաղական ցանցից:

Ինչպես նաև նախատեսվում են ասֆալտապատ բացօթյա մարզահրապարակ՝ 806.75 ք.մ մակերեսով և բարեկարգված կանաչապատ գոտի՝ 2799.35 ք.մ մակերեսով: Վերջինում նախատեսվում է սիզամարգերի ստեղծում և հետագայում համալրում գեղազարդ բուսատեսակներով, որի խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործման ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Կաթսայատունը կապահովի դպրոցի ջեռուցումը ձմեռային ամիսներին և տաք ջրամատակարարում ամբողջ տարվա ընթացքում:

Եզրահանգում Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: 2017թ մարտի 7-ին և հուլիսի 21-ին նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Քեմփ Վենչուրս>> ՄՊԸ կողմից ներկայացված Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ



Ա. Սինսայան